



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



1909

179 99

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԶԵՅԹՈՒՆԻ ԵՒ ՎԵՐՁԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

ՈՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ 1895ԻՆ

Օ. Գ. ԱՋԿԵՄՈՎ
— ВАРНА

Գրեց
ԱՐՏԱԿ ՄԻԶՐԱՔԱՏԵԱՆ



Կ. ԳՈԼԻՐՈ

1909

43702-Ա.Հ.

1354-ԱՅ
Օ

ԶԵՅԹՈՒՆԻ

1895 ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՊԱՏՃԱՐՆԵՐԸ

Ես այս առղերով պիտի աշխատիմ քիչ թէ շատ, ներկայացնել ԶԵՅԹՈՒՆՅԻՆԵՐՈՒՆ կրկին ոտքի ելածներուն պատճառը . որ այս հետեւեալն է : Այս ժամանակները տեղեոյն Գասրըն գայդաւգամի փոխանորդ նատաւ և այս մարդը 30 տարեկան մոյեռանդ թուրք չըջանաւարաներէն մին էր, և ԶԵՅԹՈՒՆի 10 տարուան սպազյէն մէկտեղ պահանջեց, ԶԵՅԹՈՒՆցիք անկարող եղան վճարել և ոկտա տեսակ տեսակ չարութիւններ ընկ . այս ըրածներուն իբրեւ ապացոյց բաւական է մէջ բերել մի քանի դէպքեր : Այս Գասրըն այնքան չարացաւ որ աղքատի մը երեք էշը վերցուց՝ որոնց տմէն մէկը կ'արժեր 200 դահեկան և իհաշիւ տէրութեան Մարտի մէջ ծախսեց 50 դրշ փ . երեք հասըր . ԶԵՅԹՈՒՆցիք լսեցին և արդար զայրութով արդարութիւնն պահանջեցին Գասրէն . նա պատուախաննեց, ևս Զեկի չեմ ճանաչեր այլ թագաւորի իրաւունքը այդպէս կը պահանջէ : Քաղաքացիք ալ խառն ժողով մը կազմեցին և Գասրին ըսին որ մեր աղքատին էշերը բեր և մ.ն.ք պիտի վճարենք թագաւորին պարագը . անոր պատուախան ընդունեցին, իմ կատարածս չը վերադառնար : Եւ Գասրըն միաքաղը միշտ կը բազձար որ ԶԵՅԹՈՒՆցիք խոռվութիւն մը համեմն և թագաւորի կողմանէ հրաման մը ըլլալով ամբողջ ԶԵՅԹՈՒՆը կոտորել տայ :

Այս դէպքը պատահեցաւ 1895 Յունիս ամսուն, թէեւ Հայրը կը մոտածէին խոկոյն լսա . դաս մը տալ Գասրին բացց ինչ ինչ պատճառներ մտածելով փոքր ինչ համբերեցին ինդրոյն եզրակացութեան խնդերուն : ԶԵՅԹՈՒՆցոց համբերութիւնը լրացաւ Գասրի բանած ընթացքին և զինուորաց քատմելիք դէպքերուն վրայ, որոնք պատճառ եղան ուռմերու նման պայմիցներուն և ապաստիութեան դրօշը պարզել տալու ԶԵՅԹՈՒՆցիներուն :

28. 1857

Գաստըն իր բոհնակալական՝ գործէն քիչ յետոյ սկսաւ նուեւուրիչ կարդ մը անդթութիւններու, այսինքն Զէյթուն 4 թառ է և ամէն մէկ թաղ առարքահաւաք ունի: 0 թառ թաղը Հաճի ազա Մէրկինեանը, վերի թաղը Կարսապիտ Միթէրխեանը, Պօլպայիր թաղը Փանոս Թաշճեանը, Ղարդալար թաղը Փանոս Շախնանուկինը և բաղսականաց տուրքահաւաք Սազիկ Զէվդէքեանը, այս հինգ առարքահաւաքները կանչելով ամէն մէկն 12000 զրչ պահանջեց: «Եթէ այս դրամները չըերէք վերջէն դաք դիտէք» բանելով վերջնական պատասխանը տուաւ, անոնք ալ ըսին որ մէնք կարող չենք այդչափ դրամ հաւաքել, անոր վրայ հրամայեց որ այս հինգ անձերը բանտարկեն: 12 օր բանտարկութենէ վերջը դատարան կանչեց և ամէն մէկոն Յական տարի բանտարկութեան վճիռ տուաւ, բայց վճուական տատենի ժողովի անդամք անիբաւի համարելով վճիռը չստորագրեցին ուղէմ կեցան: Այս միջոցին Եւրոպայէն նումակ մը եկաւ Կէսինեան Աւետիքի, Չաքրեան Եղիայի, Եազդապեան Լեւոն Էֆ փ, Չաքրեան Աւետիքի, Գրագուեան Ստեփանի, Չուպուրեան Յարութիւնի, Կիւլվանուեան Յարութիւնի, և նամակին պարունակութիւնը հետեւեալն էր: «Եթէ ձեզի ուժ տալու ըլլանք կարող էք պատերազմիլ», անոնք ալ կը պատասխանէն որ «այս կարող ենք», այս լուրին վրայ Յուլիս տասոյն վերջերը Արագաչ Միթայցէլ և Խաղեր Քէնեայի տունը 6 անձեր կուգան: Հնչակեան խումբէն, պարոնացք Աղոսի, Հրաչեայ, Մէհն, Ապահ, Նշան և Միհրան հուաքուեցան Քէնեայի տունը, և սնկէ Քէնեան առնելով այս 6 հոգին Պէնիլիք լեռը տարաւ ու պահեց և վերջէն լուր դրկեց Աղազովան Փանոսի, Շատալախ Հաճի Մարտիրոսի, Տէլէմէլիքի Տէր Մարտիրոս Բնյ ճին, Զինիկէօլ Պետրոսին, Ֆանուղցի Բարթուղիմէսոս վարդապետին, Խարախաչ գօշանըն օղու Յարութիւնին, աւագ գոլ Տէր Մարտիրոս Բնյ ճին և կ'ըսեն թէ մինք աղքատ եմք ուժ չունինք պատերազմելու, Հնչակեաններն ալ կը պատասխանէն թէ մի վախնաք հոս զօրք չխար ինչու որ Հայերը ամէն եեղէ պիտի ելլեն պատերազմի, անոր համար զօրք չի գար ձեր վրայ և Եւրոպայէն ալ ձեզի օգնու-

թիւն պիտի գայ, ասոնց խօսքին հաւատալով կ'որչեն հետեւեալ անձերուն խորհուրդը առնել Նավարէթ չառուշ Ելիփարիւեան, Եղիա աղա, Նշան աղա, Սիւրենեան թաղէն Սիրէնեան Խաչեր աղա, և հաճի աղա Մէրկինեան, Փանոս Զօլաքնեան, Մանուկ Խումուեան, Կարսապեան աղա Սիւրենեան, հաճի Յովհաննէս Մէրկինեանց Պօլպայիր թաղէն, Սարգիս աղա Պալճեան, հաճի Փանոս Շամքիշեան, Դաղաքի Գիւրիկեան, Սւետիք Տ. Ղազարիւեան, Մանուկ Տէրէնթ օղու:

Ղարզալայիր թաղէն, Ասատուր աղա Եազդուպեան, Չաքր օղու, Պետրոս աղա և Եղբայրը Փանոս աղա, Աւոկաննեան Խաչեր հաճի Վարութիւն աղա:

Նաեւ կ'երթան Զէյթունցիք ծանօթ մարդերուն լուր տալու և հնի կը գանեն մի քանի մարդերնին և անոնք ալ խօսք կաւտան, անոր վրայ Աղապաշցիք կը վերառնան պարոններուն քով և կ'ըսեն թէ մեր մարդերը տեսանք ու խօսք տուին:

Եւ անմիջապէս Պին. Աղասին, Հրաչեան կը լի Նազորէթ չառուշի քով գացին մազարան և անսունցան, յետոյ Ասորնեան Հաճի Յարութիւն աղա, Մէրկինեան Հաճի աղա և Եղբայրը հաճի Յալշաննէսը, Նազարէթ չառուշի եղբայրը Սարգիս աղա հնի կանչուեցան (մազարան) և գացին ու խօսքուրդը րըմին և գարձու սա պատասխանը տուաւ Մէրկինեան Հաճի աղան, «Մէնք ոյժ չունինք պատերազմի», Հնչակեաններն ալ պատասխաննեցին որ միւնօյն օրուան մէջ պիտի պատերազմին Թուրքաց հետ Մարաշ, Աստան, Հաճին, Այնթապ, Ուրփատ, Կիւրին և այն քաղաքները, և մանաւանդ Յնդպիտին օդութիւն պիտի գայ ձեզ. ասոր վրայ հաճի աղա Մէրկինեանը ըստ ուր որ այդ յիշած քաղաքներու բան մը չեն կրնար ընել և ետ կը քաշուին ու ամբողջ պատերազմի. Զէյթունցուց վրայ կը մնայ, մնաք վարձանքի կը համապիտինք, այս ալ գիտցած եղէք պարոններ, և մնալի եկած օգնութիւնները Զէյթունցուց չեն տար այլ Մարտու, Այնթապ, և Հաճինցիք կ'ուտեն, բայց անունը Զէյթունցուց կ'ըլլայ որ տակաւին որևէ տեղէ մը օգնութիւն ընդունած չենք, կրնայ ըլլալ որ այս ան-

գամ ալ եկած օգնութիւնը այս թուած քաղաքներդ կ'ուտեն
և մեզի չեն հասցներ, մենք ալ բացը կը մնանք, վերջէն ալէկ
շըլլար գործերնիս : Ասոր վրայ մասմեցէք ու մեզ պատասխան
տուէք, Հնչակեան պարոնները պատասխանեցին թէ հիմայ այն
ըսածիդ պէս շըլլար, մենք հոս ենք, և ահա 120 ոսկի յանձ-
նեցինք Չաքրեան Սւագին, Կէսամանեան Սւետիք որ վատօթ
բերել տալու համար, 1-2 օրէն ալ Մարտէն աղ պիտի գայ
Ալապաշի Միքայէլ Քէհեայի . դրամ ալ պիտի գայ միայն իմ
գրութեան կը սպասեն, 30 օրէն սկսնք պատերազմի . անոր
համամատ պատրաստուեցէք : Այս խորհուրդներուն վրայ խօսք
տուին, հաճի աղա Մէրկէնեանը, Սարգիս աղա ենի Տիւնեա-
հանը, Սամքնեան հաճի Յարութիւն աղա, Նազարէթ չաւուշ
և Մէրկէնեան հաճի Յովհաննէսը ու վերապարձան Զէյթուն :
Ամէն ոք իւր մարդոց ըրաց խորհուրդնին պատմացին և յիտ
այնորիկ տանն ոք իւր գործերը կարգադրելու գացին, խկ հաճի
աղա Մէրկէնեանը Թոմաս գիւղը գնաց որովհետեւ աշար առած
էք, և իրեն չէրքէզ Թովսա սնուն բարեկամներէն մէկը քովը
կանչեց ու խնծի կիւլէրքիլէ պէտք է ըսելով Կեսարիա ճամփեց,
խկ Զէյթունի մէջ գտնուած անձերը սկսան նպարավաճառնե-
րուն ձեռամբ կապար և ալ բերել տալ Մարտէն և այլ տեղերէ :
Խկ հաճի աղա Մէրկէնեան զրկած Թովսա սնուն չէրքէզը կը
վերադառնայ 600 օխա կիւլէրձիլէն կը բերէ ու կը յանձնէ
հաճի Յովհաննէս Մէրկէնեանին և օր պայմանաւ դրամը առնե-
լու համար, հաճի Յովհաննէսը այդ կիւլէրձիլէն դազանի Զէյ-
թուն կը բերէ ու եղրօրը հաճի աղա Մէրկէնեանին լուր կը
զրկէ եկուր կիւլէրձիլէն եկաւ ըսելով, այն ալ լուր առնելուն
պէս անմիջապէս գործը ձգելով կուգայ Զէյթուն և 6 տուր
պայմանաւ պարաքը աստ ամսդ վիստուելով կը վճարէ 50 սոկին,
յոյս ունենալով թէ Հնչակակամներէ պիտի ստանայ : Յետոյ
այդ կիւլէրձիլէն զրկեց հաճի Մէրկէնեանը Սլապաշ ծեծել տա-
լու համար :

Զէյթունցիք այս պատրաստութիւնները տեսած միջոցին,
Մարտէն կառավարութիւնը լսեր է օտարականներու Սլապաշ
գալը, և անմիջապէս շրջուն զինուորական Զերքէղ Սալան

պէկը խումբ մը սատիկաններով հնա զրկեց կերպով մը այդ
օտարականները ձեռք բերելու նպատակաւ : Սալան պէկ Յու-
նիս օնին եկաւ Սլապաշ (Սրեգին) տուրք պահանջելու պատր-
ուակով . գիւղացինները պատասխանեցին որ այժմ գրամ
չունինք, երբ ունենանք կը վճարենք : Սալան պէկ բարկացաւ
և ուղեց ծեծել ու բանտարկել Խաչեր քէհեան : Անմիջապէս
ժողովուրդը հաւաքուեցաւ ու սուք եկան և Սալան պէկը
անարգանոք գիւղէն վճարեցին : Երբ Սալան պէկ բացարձակ
յայնեց որ այս անու օտարականներ կան պէտք է որ ինձ
յանձնէք, այն առնեն Սլապաշիք բախ թէ մնաք ոչ սուքը և
ոչ աղ օտարականները կուտանք, աւելի լու է բոլորնիս ոլ
մեռնինք կան թէ օտար հւրենիս տանք . ասոր վրայ Սալան
պէկ կրագլուխ եւ գնաց :

Ասոր վրայ Զէյթունի կառավարութիւնը 2 Հայոցէտ
թուրք զինուորանիր Զէյթունցից զգեստները հագցունելով կը
զրկին Պէհմանիկ Հնչակեաններուն քով իւր հայ . այն միջոցին
Սլապաշի տղայ մը կերակուր կը տանէր Պէհմանիկ և կը տեսնէ
որ Հնչակեաններուն քովը նստազները Զէյթունի զինուորներ
են, անմիջապէս նշանով կը յայնէ տաճիկ ըլլանին երբ կը
հասիսն որ ասոնք լրտեմներ են անմիջապէս կը զարնեն :
Զինուորաց մեռնիլը Զէյթունի կառավարութիւնը լուր առնե-
լուն պէս անմիջապէս կը հետազրէ Մարտ և երեք օր վերջը
Պերգիզայ ըստած տեղը կանոնաւոր զօրքով լեցուեցաւ, և կը
պատրաստուէին որ Զէյթունի վրայ քալեն : Ահա պասերազմա-
կան գործողութեանց սկսվոր կամ Զէյթունցոց հարսանիքը,
այս միջոցին Հաճնին Մարտ գացող թուրք հարիւրապեար իր
կնոջը հետ կազաննեն, և այս սպանման քննութիւնը կատա-
րելու համար Մարտէն հաղարապեատ մը դալով Սէկ գնաց և
այն տեղին Ֆանուղ գալով տեղւոյն հայ միւտիւրը և շատ մը
խեղձեր քննութեան կ'ենթարկէ . վերջապէս որ և է հետք մը
չդանալով ճամփայ կ'ելլէ Մարտ և բաւական Հայեր կը կալա-
նաւորէ հետք տանելու, երբ Սուչաթը կոչուած տեղը կը
համնի անմիջապէս Ֆանուղիք դէմը ելլելով չարչչար կապան-
նեն հետք գանուած 7 թուրք սատիկաններով մէկտեղ և կ'ա-

զատեն հայ կալանաւորները : Այս լուրը Մարտչի կառավարութիւնը լսելունապէս կրկին կը զայրանայ և անմիջապէս Կ . Պօլս կը հուագրէ . այս միջացին Այնթապէն Յագի կուգայ Մարտչ Զէյթուն երթալու նպաստական և կը լսեն որ Կէմէքսիս անուն Թուրքը Հայերուն շատ չարութիւններ կ'ընէ եղեր , այս 6 հոգին խօսք մէկ կ'ընեն չարագործք մնացնելու ու կը զարնեն և որ անմիջապէս մնաւ . իրիկուան ժամը 12ին Մարտչէն կը հեռանան ուղղակի Զէյթուն կ'երթան . կառավարութիւնը շատ կը վնասուէ բայց չգտնար այս 6 Այնթապցիները : Երբ Այնթապցի երիտասարդները կը հասնին Գարսնլզդ Տէրէ Պին . Հնչակեանները խորհուրդ կ'ընեն ու լուր կը զրկին Զէյթուն . Նազարէթ չաւուշ Եէնիտիւնեանի , Հաճի աղա Մերկէնեանի , Եղբարը հաճի Յովհաննէս Մերկէնեանի , Պապիկ փաշայի աղան Սւետիս Եէնիտիւնեանի , Պողոս Ազարեանի և անոնց հետ միասին 30 քաջ երիտասարդներ առաւօտուն կանուխ Գարսնլզդ տէրէ կը հասնին :

Երբ 30 երիտասարդներով հերոսները կը համան կ'ակսին ժողով ընել . և որոշում կուտան որ 8 օրէն պատերազմի սկսին որովհետեւ վառօթնին պատրաստ չէ տակաւին , և սապէս կը բաժնեն ընկիւք գործերնին , հաճի աղա Մերկէնեանը և Նազարէթ չաւուշը իւր մարդերով միասին Զէյթունի կառավարութիւնը պիտի գրաւեն և Գայմադամը գերի պիտի տանեն , Բարթոլիմէոս վարդապետը ու Հնչակեան անդամները իւր մարդերով և Սլաշցիք ի միասին զօրանոցը պիտի գրաւեն և մէջի մարթիւնները առնելով չունեցապին պիտի բաժնուի , այս խորհուրդով իրարմէ բաժնուեցան և սկսան ամէն ոք իւր պատրաստթիւնով զրադիլ : Այս միջացներուն Զէյթունի իշխան Ղազար Շովրոյեանը Մայր եկեղեցին կը հաւորքէ միւս ողաները և որոշում կուտան որ մէջէննէն մի քանի հոգի զրկին Գարսնլզդ Տէրէ համոզելու համար այս նպաստակէն ետ կեցնելու , և պատաժամաւոր լինարին Զէյթունի առաջնորդական փոխանորդ Տ . Կարապէտ քահանաց Երկանեանը , Եղէկիւլեան Աստուր աղա և Զաքրեան Սւագ աղա : Այս երեքը կերթան կը գտնան Ալապօղանեան Փանոսը և անոր առաջնորդութեամբ Հնչակեան-

ներուն քով կ'երթան , երկար բարոսկ տեսութիւններ ընելնուն վերջը այս 4 անձերը կ'ըսեն որ ահա ժամանակին է պատերազմելու , մի կայնիք և ժամանակ մի՛ կորսոցնէք , այս խարհուրդը ապերթուն վերջը կը վերագանան կուգան Զէյթուն և իշխանին ու թագացին աղաներուն կ'ըսեն որ գացինք բայց հոն չեին , չգտանք , ուր երթանին անցայտ է , այսպէսով Զէյթունցը սիրաը կը հանդարտեցնեն : Այս համերատութեան վրայ յամփարծ լուր մը ասրածուեցաւ Զէյթունի մէջ : Սասաւնը խարդախութեամբ կատավարութիւնը կոսորեր է աէլի : Զէյթունցիք իրենց հայ եղբարց կոսորտելուն վրայ շատ ցանեցան և սկսան մասածել անոնց վրէժը առնելու , բայց ինչ աեսակ վրէժ առնելուն որ ազդ արեան փոխարէն համարուի , այս լուրը Գարանլզդ Տէրէին միւս ընկերաց ալ գնաց , անմէք ալ վերջնական որոշում ըրին որ անմիջապէս այսօր յարձակինք գօրաց վրայ վրէժնիս լուծենք ըսկելով , ամէնքը մէկ ուժաւեցին :

Իսկ Մարտչի կառավարութիւնը տակուին անգէտ այս գործուածքներէն , իւր ասածագրած չար խորհուրդը ապահովապէս ՚ի գործ զնիւլու համար պէտք եղած նախանոգ միջոցները ձեռք առնելով՝ կուգէր աւելցընել Զէյթունի զօրանոցին ուժը : Երբ որ Զէյթունի զօրանոցի զնկապեաէն ալ հնապիր սապան , փաշան ամենայն կառավութեամբ գունդ մը զօրք ձամբաց հանեց Մարտչէն , որոնք մինչեւ Զտնան գետին միւս եզրը Իերողիլ չայր կոչուած տեղը հասան Յունիս 26ին :

Այս լուրը համենելով յեղափոխականաց պետ Պին . Ազարի և Ենափառնեաւ Նազարէթ չաւուշի՝ որոշեցին որ անոնց մուտքը արգիլին զնուած զօրութեամբ , և անմիջապէս խորհուրդի կանչեցին հետեւեալ անձերը , Ետմ-քէշշեանը , Խաչէր Քէնեան և Միթայէլ Քէնեացի տղան , ձալլապը և 150 քաջ երիտասարդներ , իրենց նպաստակնին յագանեցին , անմէք ալ հաճութիւն տուին այս որոշման , և վերոյիշեալ քաջարի անձինք 150 երիտասարդի գլուխի անցան ու գնացին մինչեւ Բերգիզ չայր , որ պափարակ դաշտ մէէ , և յարձակեցան Թուրքաց վրայ . կուրը տեւեց երեք ժամ և անոնցմէ 33 հոգի սպաննեցին ու 12 հոգի ալ վիրասորեցին , մնացեալները ամէն բան թողլով փախչելու

կը պատրաստուէին՝ երբ Յերզիզցի հազարաւոր զինեալ թուրքիր սկսան Զէմթունցւոց վրայ քաղել, այնչափ բազմութեան դիմադրել խիստ գժուար էր, մանաւանդ տեղւոյն դաշտային դիրքին պատճառաւ, ապաստանելու տեղ չի կար. ո՛չ մարտկոց և ո՛չ ալ պատնէշ ունէին Հայերը, ուստի լաւագոյն համարեցին մէկ կողմէն կուռիլ, միւս կողմէն յետս նահանջել. այս կերպով անցան Զահան գեար գրեթէ անմխաս, վասն զի ձալլար Կարապետը և երկու ալ ուրիշ Ալապաշցի (Արեգինցի) ներ նահասակուեցան և նազարէթ իշխանը (շաւուչ) ուրիշ երեքի հետ վիրաւորուեցան, որ ասդա առողջացաւ իր մօրք ասրած դարմաններուն չնորհիւ: Այս առաջին նահասակ քաջ Կարապետ Զալլապիի գլուխը թուրքերը կարելով ասրին Մարտաշ «Նազարէթ չաւուշի գլուխին է» ըսելով. թուրքերը սոսով միմիթարուեցան:

ԶՈՐԱՆՈՅԻ ԳՐԱԿՈՒՄԸ

Վերապարձող Հայ հերոսները կ'որոշեն զօրանոցը գրաւել և կը հաւաքսին Ալապաշի Օյնախ կոչուած տեղը, և սնից 2 մարդ կը դրկեն Հաճի աղա Մերկէնեանին լուր առզու համար որ ան ալ իւր մարդերը հաւաքելով Օյնախ ըստուած տեղը գայ:

Հաճի աղա Մերկէնեանը լուր առնելուն պէս անմիջապէս իրեն մարդերուն լուր կը խրկէ որք են՝ Խուլմաննեան Մանուկ, Սիւրէնեան Խաչէր աղա, Սաշնեան Կարապետ աղա, Թօղօվիկ Խաչէր, Սիւրէնեան Կարապետ աղա, Եալուպետն Լեւոն էֆ. Ռւոկունեան Խաչէր, Մերկէնեան Պապա աղա և Տէր Ղազարեան Սւետիք: Եւ կ'ապապրէ Հաճի աղա Մերկէնեանը որ. «գացէք ձեր մարդոցը ըսէք, պատրաստ ըլլան մինչեւ առաւօս, և կրկնի կ'ապապրէ ըսելով թէ՝ Տաճկաց մէջ գտնուած Հայերը անպատճառ հսու բերէք որ անտնք ալ ոչինչ տեղը չգոհուին բարբարսաց ձեռամք:» Այս առևտութիւնները ըրած ժամանակ լուր կուգայ Մերկէնեանին որ քեզի սկսեցիրէն կ'ուզեն կոր իշխանները. այս լուրին վրայ Զէմթունի մայր եկեղե-



Հաճի աղա Մերկէնեան Զէյրունի հերոսապետ եւ ընկերօն գօրանոցը գրաւման ժամանակ

ցին կ'երթալ հոն հաւաքուած կը տեսնէ տաճողջ իշխանները և կը հարցնեն հաճի ապային թէ մնաք կը լսենք կոր որ ամբողջը հաւաքուած են պատերազմի համար իրավէ է. հաճի աղան ալ կը պատասխանէ. Այո՛, այդ տեսակ նպատակ մը տնկնք, և կ'ըսեն թէ պարութ ևայլն պատրաստոթիւն ունիք, այն ժամանակ հաճի աղան կ'ըսէ որ ևս 100 օխա պարութ ունիմ առ այժմ բաւական է և վերջն ալ Աստուած ողորմած է, ինչ պէս նաև 600 օխա ալ կիւլքերնիւ տնիմ որ Սլովաշ ծեծել կուտամ կոր: Ասոր վրայ իշխանները կ'ըսեն որ՝ այս բանը չըլայ նէ լաւ է և իրենց մէջէն մարդ կ'ընտրեն որ երթայ ժողովուրդը համազէ. այն գացող անձերը արդէն ամէն բան գիտէն և կ'երթան կը քաջովերն ժողովուրդը ըսկով թէ ձեզ տեսնէմք քաջի պէս պատերազմուցէք, և կը վերասդաւան կ'ըս որ անկարելի է արդիյել ինչու որ տաճողջ քաղաքը ոսքի ելած է. անոր վրայ հաճի աղան, առաւասեան մէկ ժամ մնաւ շուկայ կ'իջնայ, կը ասեան որ 150—200ի չափ երթասասրդներ հաւաքուած կը տպասեն, անմիջապէս այս 200 հոգին գլուխը կ'ամցնի ուզգոտի կառավարութեան դուռը ձեռք կ'առնէ և գայմագամք տեղէն հանկառ Սիւրէնեան րերգը կը տանի, «այժմ հոս տեղ հիւր էք մեղի» ըսկով. Սիւրէնեան իշխաննեն կը յանձնէ և կրկնն կուգայ կառավարութեան դուռը, ամբողջ բանապետաները կ'արձակէ, և կառավարութեան մէջ գտնուած 60 մարթինները տոնելով աղօց կը բաժանէ և իւր քայլ գտնուած պարութք պէտք եղած տեղերը տալէն վիրջը կ'ելլէ զօրանոցը գրաւելու: Ասուաօտուն կոնուխ կ'ակսի եկեղեցները իւր զանգակները հնկայնել, այս միջոցին բոլոր Զէյթունցիք կ'ուզեն պատերազմիլ բայց զէնքի նուազութիւնը և պարութի պակասութիւնը ևս կոցուցին շատերը: Երբ հաճի աղան իւր մարդերով երեւան կ'ելլէ զօրանոցը գրաւելու նարաւուակա, Բարթուղիմէսո վարդապետը և Հնչակեան անշ գամները միւս կողմէն և Սլովաշիք ձախակողմէն, Զէյթունցիք աջակազմէն կը սկսին կրակել զօրանոցին վրայ, այս միջոցին Հայկակները կրօշակներէն կը տնկն հնակեալ տեղերը, առաջին գրութիւն որ մենք աղան միջնորդ կ'առաջակա կը այրենք, անոնք անձնատուր ըլլալու նշան թնթահօթ մը արձակեցին բայց Զէյթունցիք անտեղեակ էին այս նշանին, 1-2 ժամ վիրջը զօրանոցէն պօւացին մենք անձնատուր եղած ենք մի արձակէք կապար, և այս լուրը անմիջապէս հաղորդուեցաւ. Ա. Աստուածածնայ վանքը գտնուող Բարդողիմէսո վարդապետին և Հնչակեան միջնորդուեցաւ որոնք անմիջապէս եկան զօրանոցին դուռը պաշարեցին: Բարթուղիմէսո վարդապետը, հաճի աղան Մերկինեանը և Շամ Քիշինեան, Փանորը և Հնչակեան անդամներէն Սլովաշն և Հրաշեան և միւս ընկերներուն բայն որ մենք զօրանոցին դուռը կը բայց կը աղան վրայ:

Յրդը Սրկուականի մօս, Գրդը քիչ մը հեռաւ մէկ լեռան մը վրայ և կը սկսին պատերազմի: Սյա միջոցին գրօշակակիր Մարտիրոս Եօլունեանը կը հակէր Յովհաննէս եղբօրը հետ, յանկարծ զինուորին մէկը կը յորձակիր գրոշակը ձեռք ձեռք, Մարտիրոս 1 կոպարով կը տապալէ զօրքը որ անշունչ կը մնայ և մարթինը կ'առնէ ու զօրքը կը նետէ փոսի մը մէջ:

Առաջին օր մինչև երեկոյ կը պատերազմին և երեկոյին Միխալի աղբիւրը կ'երթան հաղարապետ Պատիք աղարապետ Ա. Պատարեան, Ասորի Շիլլիկեան: Ասուաօտուն կանուխ սկսակարգի և երեկոյին ամեն ոք բանակովը մնացին իրենց տեղերը, իսկ երեկոյի օրը ասւաւուուն կանուխ գացին ստունքն անձեռք, երեկոյի բանակի հաղարապետին ստունք այրելու որ ասոնք էին հաճի աղան Մերկինեան, Զօլախեան Փանոր, Թէմէկէրեան Սուտուր, Թօղման Աստուր, Պաղման Սարգիս, Ալմանընըն Մոճը և այրեցին ու իրենց սեփականնեցին այս տեղերը և զօրքը լեզապստառ կը փախէին, իսկ բաւական պատերազմին վիրջը երեկոյ եղաւ իսկ գրդ օրը ասւաւուուն ելան զօրանոցին եսեւը գտնուող տաճկաց տուները վատելու և ասոնք էին գայողները, Շամ Քէշինեան Փանոր, Ելզում Հայրապետ, Կէօնտէր օղու Պետիկ, այրեցին մղկիմի քովի տունը, բայց մղկիմի մէջ գտնուած զինուորները կը պօւան զօրանոցին որ անձնատուր եղէք թէ ոչ պիտի այրենք, անոնք անձնատուր ըլլալու նշան թնթահօթ մը արձակեցին բայց Զէյթունցիք անտեղեակ էին այս նշանին, 1-2 ժամ վիրջը զօրանոցէն պօւացին մենք անձնատուր եղած ենք մի արձակէք կապար, և այս լուրը անմիջապէս հաղորդուեցաւ. Ա. Աստուածածնայ վանքը գտնուող Բարդողիմէսո վարդապետին և Հնչակեան միջնորդուեցաւ որոնք անմիջապէս եկան զօրանոցին դուռը պաշարեցին: Բարթուղիմէսո վարդապետը, հաճի աղան Մերկինեանը և Շամ Քիշինեան, Փանորը և Հնչակեան անդամներէն Սլովաշն և Հրաշեան և միւս ընկերներուն բայն որ մենք զօրանոցին դուռը կը բայց կը աղան վրայ:

որ մեզ կը զարնեն, դուք անոր համեմատ շաբժեցէք, և ահանք որ վեսս չի գայ, անոր վրայ միւսներուն հաշան ըրբնք քովելնիս գալու և եկան, անոր վրայ զօրանոցին դռւուր բացին և զինորաց կիները դռւուր համեցին, կիները կուլազին հարցուեցան իրենց թէ ինչու կուլաք, անանք ալ ըսին որ մեր զինուորները Սամայ կիներուն ինչ որ ըրփն կը վախճանէք որ դուք ալ մեզի այնպէս կինեք, անոր վրայ բախն որ մի վախճանք Հայերը բարոյականի տէք են այդ տեսակ բաներ մեզմէ մի սպասէք լսելով քաջալերեցին թուրքաց կիները և հաւասարիմ անձանց յանձնեցին Զէյթուն տանելու համար. երբ կիները կ'երթային Զէյթունի հեղեցիներուն զանգակաները կը հնչին ի հաշան ուրախութեան և ամբողջ Զէյթունցի կիները մինչեւ գերեզման եկան դիմուորելու իրենց հիւրերուն և առին տարին իրենց տուները և հիւրընկալեցին: Իսկ գերի իյնող զինուորները խումբ մը Զէյթուն տարին, մոտ մը կառավարութեան պալասը նատեցուցին և մոտ մըն ալ տուները ցրուեցին, զօրանոցի մարթիները որ 600 հաս էր, անանք ամբողջը չունեցող Հայ երիսասարդաց բաժնուեցան և զօրանոցի 4 անկիւնը 4 թաղեցիներու բաժին ինկաւ, մէջի գանուած տալլանքները ասոր անոր ձեռամբ դրաւուեցան, ասոր վրայ անմիջապէս ժողով մը կազմեցին և Հնչակեան անդամները կանչուելով ըստեցան որ դուք մեղի ըսիք որ Անգլիացին օգնութիւն պիտի գայ ուր է, այս միջոցին Զէյթունի իշխանները եկան զօրանոց և լսին որ այս ըրածնիդ լու բայց դուք ըսիք որ աղգէն օգնութիւն պիտի գայ, ուր է, չեկաւ, եթէ այսպէս մնաք նէ վերջը լսու չէ ինչ պիտի ընենք, ահա 600 օխա սրաբութ հաճի աղացին քով կար. և 200 օխա Այնեան Աւետիսի քով կար. այս ամենը 5-6 առուր մէջը կը լսանաց մնկէ վերջը ի՞նչ պիտի ընէք, վերջապէս հմաս 300 օխա կիւլէրձիէ միայն կայ և քիւրիւրդ ալ չիկաց որ պարութ շինուի, ալ ալ չեկառ և հիշաղ Զէյթունի մէջ, հմաս ի՞նչ պիտի ընենք, վերջապէս որոշուեցան որ չըլլաց թէ դրացի թուրքերուն դպիք ինչու որ մենք կառավարութեան նետ ինդիր ունինք: Այսպէս որոշեցինք զօրանոցին մէջ զանուած թունիսոթի սումբները գակել և մէ-

ջէն ելաւ բաւական քանակութեամբ քիւրիւրդ, այդ քիւրիւրդները հաւաքելով մեր քով գտնուած կիւլէրձիէն պարութ շինեցինք և այդ շինած պարութով սկսանք պատերազմի: Մեր ընկերները գացին դրացի գիւղերը թուրքերէն հաւաքեցին ամբողջ զէնքերը և չունեցողին յանձնեցին, և այս կարգադրութեան վրայ Հայերը հանդարս մնացին մի քանի օր, և կրկին ժողով կազմեցին ու պարուն Ազատին և Հրաշեացին բախն որ դուք մի՛ գիւնաք որ Զեր խօսքերուն հաւատացինք ու պատերազմի ելանք, արգէն մենք մի քանի տարի էր որ կ'ուզէնք պատերազմի ինչու որ կառավարութեան բանած ընթացքը մեզ զգուեցուցած էր, և Սասունի կասորածը որ լսեցինք՝ աւելի մեր սիրտերը բորբոքեցաւ պատերազմիլու ու Սասունի վրէմք առնելու համար:

Զէյթունցիք իրենց դիրքերը տմրացնելու նպաստակա թշնամեաց դէմ ձեռք տուած էին միջոցներ :

Միեւնայն օրը հետեւեալ լուրը կ'ասնեն ֆանուզէն. թէ ֆանուզի վերաբերով Զուգուր-Հիսար զիւդի թուրքերը պատրաստած են իրենց մէջ գանուած 20 տուն Հայերը ջարդելու (այս 20 տուն Հայերը ֆանուզէն եկած փոքրիկ գապթականութիւն մըն են, և Զուգուր-Հիսարէն կէս ժամ հեռու կը բնակին) երբ ֆանուզիք կ'իմանան թուրքաց չար նպաստակնին անմիջապէս ժողով կը գումարեն և կ'որոշուի Պըլարբեան Գէրոգ էֆէնաբին (ֆանուզի միւստիւրը) մի քանի հոգինվ երթալ Զուգուր-Հիսար թուրքերը համոզելու համար. Հայ միւտիւրը կ'առնէ ընկերները կ'երթաց Զուգուր-Հիսար և կը յորգորէ թուրքերը, որ համոզիս կինան, հասկցնելով մանաւանդ թէ Հայերը թուրք հաստրակութեան նետ զործ չունին, կ'ուզէն հաշտ պարիլ անձանց նետ, Հայերուն վէճը կառավարութեան դէմ է և այլն. այսպէս յորդորելէ վերջը կը վերագտանան դարձեալ տեղերնին. երկու օր վերջը կը լսն որ Զուգուր-Հիսարի թուրքերը դրացի Զէրքեղներուն հրաւէր կը կարդան իրենց մօտ գանուաղ Հայերը ջարդելու:

Երբ ֆանուզիք կը լսն այս լուրը կրկին խորհուրդի կը նսանին և կ'որոշէն 100 մարդով Զուգուր-Հիսար երթալ պէտք

եղածը բնել և գացող 100 մարդոց գլուխը այս հետեւեալ անձինքը կ'որոշուի: Հայ միւտիր Գէորգ էփ, Պէլապրեանը, Զի՞նիկէօլ Հոմի ազա, Ալտամանն Մանուէլ ազա, Սէփէթձեան Ալիքսան, Տնտեսեան Սւետիս աղա և միւս Սլամանեանները. առաջք ուղղակի կը դիմն Չուդուր-հիսար գիւղը գիշերանց և Զէրքէղներուն գացող անձերը բանութեամբ ետ կը գարձունեն, Հայերը կը հրամացն որ անձնատուր բլան և զէնքերնին յանձնեն, գիւղացիք դէմ կը կենան, ասոր վրայ կը հրամացէ միւտիւրը փոխադարձ կրակ ընեն անոնց վրայ, ընդհարում մը ահեղի կ'ունենայ և թուրքերը անձնատուր կը լինին, ունանք ալ այցեւայլ աեղեր կը փախին: Միւս մնացած թուրքերէն 40 հոգի կապել տուաւ և հեար առաւ դէպի Զէլթուն տանիւունապատկաս, բայց ճամբան խորհուրդ բրին որ ելթէ Զէլթուն տանինք իշխանները կրնայ բլալ որ արձակեն այս թուրքերը. մինք այսչափ աշխատինք ասոնք ձեռք ձգելու համար և ազատ արձակուին, այս մերին գործին չիգար ըսելով կ'որոշեն որ մեւցնեն, և ճամապարհն վրայ եղած միջոցնին հրացանի կը բանին 40 թուրքերը, հոն փափ մը մէջ ձգելով կու գան Ֆոնտուդ եղուածիւնը կը պատմնն միւս ընկերաց:

Այս միջոցն նամոկ մը կուգայ Եէնիգէդալէի մէջ գլունուած կատինաց վանքի վանահայր Մանուէլ վարդապետէն Հայերէն գրուած, որ թուրք զինուորներու ձեռքով Հայր Սարվադորի և ուրիշ 12 անձնոնց ողջ ողջ այրուած և վանքը ուսարի արուած բլալը կը ծանուցանէր և անմիջական օգնութիւն կը խնդրէր ու կ'ըսէր թէ հակառակ պարագային իրենք ալ անխուսափելի կորստեան սլափ մասնուին:

Եկած նամոկը ի լուր ժողովրդեան կը կարգացուի և կ'ուրացնի երթալ օգնել անոնց:

Իսկ Զէլթունի հետեւեալ հերոսները կը պատրաստուին Տէօնիկէ գիւղի վրայ յարձակելու, գացող անձնոք այս հետեւեալ հերոսներն են, Շամ Քէշչեան Փանուը, Սիւնկիւնեան համբ Վարդելատը, Երկանեան Համի Յակոբը, Սիւնկիւնեան Կարապետը և այս 4 քաջամիրս հերոսներու հրամաննին տակ 100 երխասարդներ կային, երբ Տէօնիկէ կը համին, լուր կ'առնեն

որ զինուորները Եէնիգէ Գալէ գացած և շատ մը վեամներ հասցուցած են, ամմիջնապէս Եէնիգէ Գալէի վրայ կը դառնան Զէլթունցիք և հոն կը համովավին Բարթուղիմէոս վրագապետին իւր մարդերովը, և կըսկսին զինուորաց հետ կուուիլ, զինուորները կը տեսնեն որ Հայոց դէմ չպիտի կարողանան զէմ դնել կը փախին: Հայերը Լատինաց վարդապետները միաբաններով համուկերձ և գոյքերով Զէլթուն կը փոխադրեն:


Այս գիշեր թուրք զօրքն ալ Մուճուք-Զէրէսի կոչուած Լատինաց վանքը կը գանուէր. այս երկու վանքերու հեռաւորութիւնն էր 2 ժամ և մէջակեղը կը գանուէր բարձր բլուր մը:

Հետեւեալ օրը Հայերը բլուրին մէկ կողմէն վեր կը բարձրանացին թուրքաց արշաւող խումբը գանալու և անոնց լու դաս մը տալու նպաստակաւ, իսկ թուրք զօրքը միւս կողմէն կը բարձրանար ուրիշ գիւղերու վրայ իւր արշաւունքը շարունակելու համար: Եւ անա բլուրին վրայ յանկարծ իրարու կը դիմաւորին մէկ քառորդ ժամու հնաւառորդիւնամբ, ու պատերազմն սկսու երկուսակեք, սաստիկ կասաղութեամբ. Թուրքաց գիրքն աւելի նպաստաւոր էր, քան Զէլթունցուց և Թոնուցուց, առանց կորուսափ: այսպէս որ Հայու մը քիթն անգամ չարխնացաւ, իսկ թշնամին ծ ժամ տեւող կուսոյն մէջ 41 դիմակ և 10 վիրաւոր թուլլով ի վախուսա գարձաւ:

Եթէ Զէլթունցիք պէտք եղածին չափ զէնք և այլ ուազմանթերք ունենացին այս կուսոյն մէջ՝ ամենայն յաջողութեամբ կարող էին մինչեւ Մարաշ ինսել, ինչպէս որ նոյն պարզաններով Անտորտէն ալ մինչեւ Զարուպագարի և ամսոփ Միւս կը հասնէին:

Այս վասուաւոր յաղթութիւնը տեսնելով, խումբ մը փախստականներ ձիերով Լատինաց մէկ վանքին գոյքերը կը փախցնէին: Խսկոյն մի քանի Հայեր՝ անոնց ետեւէն համակալով բանեցին զանոնք ու բոլոր կողապուտները ետ առնելով, երեք թուրք ալ վանքին դրան տաշեւ բնիրն սասաննեցին: Երբեւ կողոպուտ այս պատերազմն՝ վեց ձեւոցն ամսոյն Յան կուսոյն, երբ կը վերադառնալին Հայերը, Հայունաց ամսութեամսութեամբ ձուրին մէջ ապաստանող Հայ և Կ'ութունց ամսութեամբ Փափերին ու-

28312 ս62



համ ողջամբ հասուցին Զէյթուն : Իսկ Հայոց մելինելէն յետոյ Թուրքերը և ատինաց վանքերը և Հայոց եկեղեցիները ու գիւղերը այրեցին մոխիր դարձուցին : Հայոց Սալվատորի հաւատակութիւնը նոյեմբեր ծին, իսկ Ենիքէ Գալիքի կոփու նոյեմբեր 9ին էր, իսկ Թուրքերը այրեցին վերոշիշեալ հայ գիւղերը նոյեմբեր 10ին :

Հայ պատերազմիկները հազիր հասած էին իրենց անզերը, յանկարծ լուր եկաւ Զէյթուն և Ֆոնտով թէ Կապանի մօտ տաճկի գիւղի գիւղապետ Տուրառուպէկը հայ աղջիկ մը բանի տաճկցնելով ուրիշ թուրքի մը հետ կը պատկէ, երբ այս լուր կը տարածուի Զէյթունի մէջ, ամէնը մէկ կը զայրանան ու կուրոչն որ երթան Տուրառու պէէկը զարնեն և աղջիկը աղասին, գացոլ անձերը ասոնք են, Զէյթունէն Մէրկէնեան համբ Յովհաննէսը, Պատիկ փաշոյի աղան Աւետիքը, Ֆոնտզէն Զինիկէովեն Պետրոսը, 40 երիսասարդներով տաճկի գիւղը կը մանեն ու Տուրառու պէէկը կուղնու գիւղացներէն, անոնք ալ կը պատասխանէն որ հոս չէ այլ փախած է, անոր վրայ Տուրառու պէէկին ատոնը թալանի անշերնուն վերջը կայրեն և հնոր 3 տուն ալ կայրի և 30 զենք ալ ատոնելով աղջիկը կանան տաճկաց ձեռքէն և կուղնու որ ամրող գիւղացին մնացնեն և գիւղը վաւեն, այս նախատեմներն ալ հաճութիւն չեն տար Շամբէյն Փանալը ու պարոն Ապանը և Կապանի քահանաները, ասոնց սիրոյն համար ուրիշ վետա չի տալով կը վերադասնան ամէն ոք իւր պեղը :

+ Զուգուր-Հիսարի թուրք փախատականները սոսկովի գոյներով նկարազրեցին Զէյթունցոց և Ֆոնտզցոց արարքները՝ ամէն կողմ գրգռելով թուրքերը, մասնաւորաբար Եայցօղուտէրէպէին, որ բաղմաթիւ պաշը պօղուքներ հաւաքեց գլուխը ու եկու Շիվիկի կոչուած հայ գիւղին վրայ, Անտրոնի գայնագամութեան տակին է անկէ երեք ժամ հետուորամթեամբ և կուղէր այն տեղը հայերը ջարդել Զուգուր-Հիսարցոց վրէմը լուծելու համար : Հայերը աղաչեցին, որ այդ չարիքը չի գործէ իրենց դէմ, վասն զի իրենք տէրութեան հաւատարիմ են, ևթէ հաւատարիմ էք յանձնեցէք ուրիմն զէնքերնիդ ըստ պէջը :

Ո՞չ պատասխանեցին նոքու, չենք կոռուիր ձեր հետո, բայց չենք ալ յանձներ զէնքերնիս :

Սյս պատասխանին վրայ թուրքաց կողմանէ սկսաւ հրացանաձգութիւնը, Հայերէն ալ տուներու և պատահչներու համեէն փոխադարձարար կրակ ընելով մասնց վրայ կոռուիլ սկսան և կոռուոներուն գլուխը այս հետեւեալ քաջերը կային, Շիվիկիի քահանան, Սարը օղան Սարգիսեան Խաչէր է Քէնամին, Շիվիկիցի Յակոր, Խուրիկեան Կարապետ, տէկի Խաչէր, և ամբողջ գիւղացին խմասին Ըլլալով երեք օր անդադար կոռուեցան և այս կոռուոյն մէջ երեք պատուաւոր Զէրքեկնէր սպաննուեցան և անոնց դէնքերը Շիվիկիցիք ասին, այս կոռուոյն միջոցին ամբողջ Շիվիկիի կիները փախան Պունառուղ գիւղը գացին



ԱՆՏՐՈՒՆԻ ԳՐԱԿԱՐԱԾ

Երբ իմացան թէ Սննդունի գամագամութեան կեդրոնը 150ի չսափ բանապարկեալ Հայեր կան զորոնք թուրքերը պատրաստուած են սպաննելու եթէ չաղատուի : Ուստի արզէն գանուած Հայերան վրայ 100ի չափ Շիվիկիցիներ և 100 ալ Զէյթունցիներ, Եէսիափինեան Նշան աղա, Զօլափեան Փանուը, Խաչէկ Էֆէնափ և 100ի չափ ալ Ֆանուղցիներ Քիլրէճնեան Կարապետ էփ ., Վարդապետին հետ ի միասին օգնութեան եկող Հայերը յաւելցնելով գրեթէ 300 հոգւով զնացին Անտրունի մէջ գանուած բանաները աղատելու թուրքաց ձեռքէ :

Եւ երթալու վրայ էին յանկարծ գէմերնին ելան թուրքաց խուժամնը գլուխինին ունենալով Ապազ Օղու Տուրառու պէջը և Եռաստի չառուց, մի քանի Զէրքէղ պէջեր և սկսան Հայոց վրայ կրակ ընել . և մերայինք փոխադարձ կրակեցին և արդէն անձնութաց զինուորներ էին մէկ ժամու չսափ ամենա քաջութեամբ կոռուելէ յետոյ սասափի տէլազակներով յարձակեցան թուրքաց վրայ, որմէք իրենց զիրքերը թողլավ փախան :

Այս միջոցին յանկարծ յարձակեցան Հայերը Ապազ Օվլու Տուրատ պէշին և Եռուուֆ չառուշին և ասոնց նմոն Զէրքէզ-ներուն վրաց, հրամանատարութեամբ Ենիսիւնեան Նշան աղախ, Զաքրեան Փանոսի, Թէսմէքէրեան Ասատուրի, Ալաճաճեան Մանուէլի, Աշրդ Նշանեան Պէտօյի, Զինիկէօլեան Հաճիի, Բարդովիմէս վարդապետի, գնդակներով տասպարեցին գետին. Երբ Թուրք խուժանը տեսու իրենց պէյերուն սպանուիլ, սիրաերնին վախ իյնալով իրենց տեղերէն փախան և Տուրատ պէշին ձին Թէսմէքէրեան Ասատուրը և Եռուուֆ չառուշի ձին Զօլաքհան Փանոսը առին և Կառավարութեան պալատին վրաց քալելով գրաւեցին ու բանտարկեալ Հայերը աղատեցին: Երբ տեսան իրենց աղատարարը անբացարելի ուրախութեամբ լեցուած կը համբուրէին զիրար: Եւ անդ կացին խումբ մը կինսեր իրը գերի, անսնք ալ աղատելով իրենց հետ առին: և վերջին գացին կառավարութեան մէջ գանուած դրամարկզը կատրելով մէջի դրամները բաժնեցին և յետոյ կառավարութիւնը այրեցին ու հեռանալով վերադարձան ամէն ոք իւր տեղը:

Կ. Պոլակն բարձրագոյն հրամանաւ 2 գումարտակ կանոնական զինուորով Ալի պէյ (Վերջին փաշա եղաւ) եկաւ իջեւվանեցաւ. Սիսնէ Կապանի մօս: Երբ տաճիկ գիւղը Տուրատ պէշին առանը այրեցին, Զէլթունցիք առկէ բորբոքուած թուրքերը դացին Ալի պէշին ամբողջը պատմեցին և առաջնորդեցին Ալի պէյի բանակը Կապանի վերի կողմբ Աէօյիւթիւն. ըստած տեղը գիշերանց, խակ առաւօտան կանուխ սկսու կրակի Կապանի վրաց և զինուորը արձակեցան ու բոլորովին բնաշխնջ ըրին, և մէջը գանուած Շամքիշեանը և Պր. Ապահը հազիւ կ'աղատին: Այս լուրը հեռագրի արարդութեամբ Զէլթուն կը համանի և անսնք ալ անմիջապէս խորհուրդ կ'ընեն որ ամբողջ Զէլթունցիքը ոտքի երան Կապանի վրէժը առնելու համար, Ալի պէյի բանակներու գէմ կուտին ըսկելով մնծ և փոքր իշխանը և հասարակ ժողովուրդը ոտքի կ'ելլեն և կուգան մըրուն 2 ժամ հետո կէնաք անուն կիրճին մէջ կը հաւաքուին և լուր կը զրկին Բարթողիմէս վարդապետին որ իւր մարդեւը առնելով մինչի գայ, նու այս լուրը առնելուն պէս կուգայ

Կինծի և խորհուրդ կ'ընեն մաս մը տաճիկ գիւղը երթալ Թուրքերը կոտորելու համար, և որոշեալ անձները խոր մարդերով կ'ուղղուի գէպ ի տաճիկ գիւղը և 4-5 խումբի կը բաժնուին այսպէս. արևելեան կողմը համարէ Մերկինեանը, արեւմը տեսան կողմը Շամքիշեանը, հրւախացին կողմը համար Յովհաննէս Մերկինեանը, հարաւացին կողմը հրդ խումբ Ենիսիւնեան նշանը խոր մարդերով և Աւետիք Տ. Ղաղարեանը: Բարթուղիմէս վարդապետը և Զէլթունի իշխանները Միւրէնեան Կարսավետ աղան գլուխ անցնելով կուուող բանակները կը հրակեն տաճիկ գիւղի մօս բլուրի մը վրայ կայսած, այս միջոցին Կապանէն Թէսմէքէրեան Ասատուր, Բասկիստեան Յարութիւն աղա, Զօլաքհան փանոս ձիով կուգային, ճամբուն վրայ կը տեսնեն Տէնիւք Մէնմէտ անուն վասը. Թէսմէքէրեան Աստուրը հրացանը քաջելուն պէս մէկ կապարով Մէնմէտը կը զարնէ, և նոյն ժամուն Ալի պէյի բանակը Կապանի ետեւէն կ'ելլէ տաճիկ գիւղը գալու համար, Կապանի և տաճիկ գիւղին մէջ զինուորներուն գալը երբոր Մերկինեան պապազան կը տեսնէ որ բանակը կուգայ կոր, խոր մարդերով կը զիմաւորէ կ'սկսի պատերազմի, նոյն ժամուն Բարթուղիմէս վարդապետն ալ կուուին կը ձախնէ համի աղա Մերկինեանին թէ զինուորները կուգայ զգուշացիր, համի աղան անմիջապէս վեր կ'ելլէ կը տեսնէ որ տակուին հեռու է, կրկին վար կ'իջնէ մնացեալ տաները այրելու և հնու գամուող իր մարդերիլ հուշերով հետո կ'առնէ վեր բլուրը կը տանի և գերի բնկած տաճիկ կիները թող կուայ, կը ձախնէ Մերկինեան պապա աղային որ եկուր մննը կ'երթանք կոր տէքի, նա ալ իր մարդերով կուգայ ըլուր, ամէնը մէկ կը հաւաքուին ու կը մնկնին սնկէ ուղղակի մնանուզ կը համանին իրենց հացկական գրաշակով և Կէնծի եկած ժամանակնին 1000 տոնի չափ գիւղացիներ հնու հաւաքուած էին, համի աղա Մերկինեանը կ'րու որ հոս մի կենաք Ալի պէյը իւր մարդերով կուգայ կոր ձեզ կը կոտորէ գիւղաց ըլլաք ըսկելով կը մնկնի իր մարդերով գէպ ի Զէլթուն: Հնու գանուած Հայերը այս անդերէն էր, որ զիշերով եկած էին Կոկիսանի կողմէ: Կէօքսին գիւղացիք 40 տուն:

Տէհիրմէն աէրէսի 50 տուն : Կէօլփունար 20 տուն : Քիրէն-
փունար 90 տուն : Դաշօլախցիք 100 տուն : Եւ առաւոտ կա-
նուխ հաճի Նազարէթ Մըխմէնան Զէյթունցին, Կոկիանի թուր-
քերը կը բռնեն և կ'ըսեն որ դուն մի փափսիք եկուր թուրք
եղիք քեզի կ'աղատենք, այն ալ չընդունիք, սնոր վրայ կը
սպաննեն :

Մինչդեռ Սլի պէջի բանակը Ֆոնտովի կողմէն այսպէս կը
յառաջանար Զէյթունի վրայ, ամողիէն ալ Մուսատֆու-Ռէմզի
փաշա ալ իւր մեծ բանակովի Զահան գետն անցնելով եկած
բնակած էր Վարդանլը կոչուած բլուրին դիմաց՝ Զէյթունէն 5
ժամ հնառաւորութեամբ :

Կը մօտենար վճռական ժամը, յորում պիտի որոշուէր
Զէյթունին ճակատապարիր՝ յազթութեամբ հսունելու իւր ցանա-
կացած ողատութեամբ կամ պարսութեամբ ամէն ինչ կորու-
սանելու, անցեալ փառքը, ինչպէս և ապագայ յոյսը, մանու-
սանդ ներկային մէջ վայելած իրենց անսահման աղասութիւնը,
չնորհիւ Հայկական նորահաստատ վարչութեան, որ հիմուած
էր իրաւանց արդարութեան ու հուասարութեան սկզբունքնեւ-
րուն վրայ : Ուստի բոլոր ժողովուրդը ողեւորուած պատրաստ
էր իւր անձը զոհելու. ի պահպանութիւն այս երջանկուէտ ու
բարերար դրութեան :

Որչափ մեծ էր թշնամւոյն նիւթական ոյժը, նոյնպէս և
աւելի ևս մեծ էր Հայոց բարոյական ոյժը, որ կ'ապահովէր
իրենց վերջնական յազթանակը : Այս բարոյական ոյժը կը ներ-
շնչէր իրենց դարսուոր պատերազմական ողին, երկրորդ՝ կրօ-
նական անկեղծ ու ջերմեռումոր հաւատքը, որով Զէյթունն ան-
մատէիլի և անբռնաբարելի կը դաւանէին չնորհիւ Նախախնո-
մական բացառիկ պաշտպանութեան, երրորդ՝ քահանացից աղա-
տապիրական ոգուով տուած քարոզները, մանաւանդ մինչեւ
այն վայրէկեանին զանազան կէտերու վրայ մղուած մասնաւոր
պատերազմներու մէջ իրենց ունիցած յաջողութիւնը :

ԵԶԻՏԼԷՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ս. ՓՐԿԻՉ

Զէյթունցիք լուր տուին որ Մուսատֆա Ռէմզի փաշացի
բանակը եկած է Զահան գետէն կ'առաջանայ կոր Զէյթունի
վրայ, այս լուրին վրայ քաղաքքի ամբողջ եկեղեցներուն զան-
գակը հնչել սկսաւ, կին և աղաք ջերմեռանդտրսար լուղով ե-
կեղեցի գնալ սկսան խումբ խումբ առ Աստուած աղօթիելու և
աղզին աղասութիւնը ուղղող հայ երիասարդները զէնքերնին
առնելով սկսան իրարու կոչում ընել պատերազմի գաշտը :

Գացին Ս. Փրկիչ և այս հետեւեանին էին . Սիւրէնեան
Կարսապես աղա, Մէրկէնեան հաճի աղա, Փապուչի Ղազար,
Զոքքեան Փանոս աղա, այս 4ր ձիաւոր էին, խկ Խումուեան
Մանուկ, Ազարեան Պօղոս, Մէրկէնեան Եղիկիէլ, Օտաճի Յա-
րութիւն այս 4ն ալ հետիսան էին, և աղօթիւնուն վերջը և-
ւոն Ա. Փրկիչն գուրս, հան բանակող զինուորներէն Հայերէն
գիացող Թոփազաղ Պոչամցի զինուորը կը կանչէ ըսելով Կա-
րսպես և հաճի աղաներ հոս մեր քով եկէք, սանոք ալ կը
պատասխանեն թէ վաղը կուգանք, և սկսան զէնք պարպել
անհոյ վրայ, փոխադարձ սնունք ալ մեզ կը պարզէն զէնք,
այս միջացին կանոնական զինուոր կուգար և մննք առկարին
կը պարպէնք զէնքերնիս քննկազար, այս միջացին Զէյթունէն
Սիւրէնեան Խաչեր աղան խումբ մը երիասարդներով մեզ օգ-
նութեան եկաւ :

Թուրքաց բանակը երբ ահաւ որ մեզի օգնութիւն եկաւ,
Ռէմզի փաշան հրաման կ'ընէ տաճկաց պատերազմի գրօշակը
բարձրացնել . մնիք լուր եկաւ գրօշակին պարզուիլը և մննք
ալ խորհուրդ ըրբնք գրօշակին գողնալու, Սիւրէնեան Կարս-
պես աղա, Մէրկէնեան հաճի աղա, Ազարեան Նազարէթ,
Խումուեան Մանուկ, այս չորսերնիս մէկ գրօշակակիր անձը
զէնքի զօրութեամբ փափուցնեք անկէ և յարձակեցնեք առջի
նոտած տեղերնուն վրայ և անկից ալ փափուցնեք և Ս. Փրկ-
իչը աղասասանող անձերը մեր գրաւման տեղը եկան և մեր
գէմ բանակեցան կանոնական զինուորը և Թավշան Թէփէ ու-

նուն կիրճին վրայ . Բասիլոսեան պապա աղան , Զօլտքեան Փամոսը և իրենց հետ բառական քաջ մարդերովք : Վերի թաղի քաջերը սանդիխի աղբւրին վրայ կայսած կուռող հայ խումբը կը պահանձէր զինուորաց գէմ . այս միջոցին այնանեղ գտնուող հայ գիւղացիները իրենց ինչքերովք փախան Զէյթուն անպատճեցան հանդերձ ընտանիոք :

Երկրորդ առաւօտ ամբողջ հայ խումբը խորհուրդ ընկլոլ սասպէս բաժնեցին բանակին դէմ կուռելու . Բասիլոսեան պապա աղա , Նազարէթ չաւուշ , Կիւլվանոսեան Նազարէթ աղա , Ասմինեան հաճի Յարութիւն աղա , Մարտացը Մանուկ և առանց հետ 300ի չափ երիտասարդներ գացին Էջէկ Մէրանի ըստած տեղը թուրքաց բանակի գէմ . իսկ երկրորդ հայ խումբը Շամքիչեան Փանոս , Պալեան Սարգիս աղա , և առանց հետ 250ի չափ երիտասարդներ գացին Եղիսաղիք կոչուած տեղը թուրքաց բանակի արեւելեան կողմը : Իսկ երկրորդ հայ խումբը Միւրէնեան Կարտապետ աղա , Մէրկէնեան հաճի աղա , Ասասուրեան Սարգիս աղա , Նազարէթ չաւուշին եղբայրը Սարգիս աղա , Մինկինեան Մանուկ , Մէրկէնեան հաճի Յովհաննէս , Ենիփախեան Եշան աղա , Շիպինելիք Սարգիս , Աղարեան Նազարէթ , Մէրկէնեան Նազարէթ , Ենիփախեան Սարգիս աղա , Ենիփախեան Եղիսաղիք Սարգիս աղա , Ենիփախեան Եղիսաղիք Սարգիս աղա , Սարգիս Կարտապետ , Պապիկեան Աւելիք : Աւշարի գլուխ կոչուած տեղը թուրքաց բանակի գէմ արեւմտեան կողմը այս անձանց հետ 60-70ի չափ երիտասարդներով բանակած էին , և առաւօտին սկսանք պատերազմիլ մինչեւ ժամը 8 , իրենք բառական չառաւոր էին , իսկ մենք չառ քիչ էինք , ասոր հակառակ իրենց կապարը ու ոչինչ կ'երթար . բայց մեր կապարը քնառ պարապ չէր ելլեր . այս սաստիկ կաւոյն զոհ եղաւ . Երկանեան Վարդունք , Սուրբիանուն Պապիկ , Մարտացը Մանուկ , Ենիփախեան Եղիսաղիք Սարգիս , Ֆրիլը օղլու Սբրահմէ , Մախատմէր Գէորգ , Տ . Ղազարեան Աւելիք , Զարքեան Փանոս , Էօքսիւեան Հաճի , Տէրէնթ օղլու Մանուկ , Մէրկէնեան Խաչէր , Երկանեան Հաճի , Գիւրէնեան Պապար , Սիւրէնեան Խաչէր աղա , Պօյիւմեան Յակուր , Միւրէնի Մարտիրոսեան Փանոս , Պօյածեան Խաչէր , այս պատերազմը անեւց մինչեւ երեկոյ և յազմանակը Հայոց Կողմը եղաւ , զինուորները այլևայլ անկեր փախան երր զինուորաց փախանարք կը անենէ Մուսթաֆա Բէմզի փաշան , անմիջապէս հրաման կ'ընէ մեծ բանակին որ Հայ պատերազմիներուն դէմ կիսամետ այս հրամանին համամատ կանոնական զինուորը կը քաջակերուի ու կասազարար կը կուռի , այս կը ուղին Հայերը կը անենէն որ պիտի յազմուին կը ձգին անելերնին կը փափչին . արդէն ժամանակը երեկոյ եղած էր կուռը կը դադրի , մազմէ նոհանակուեցան 2 քաջ Հայեր :

սին որ ի՞նչու ետ կը նահանջէք , քաջի պէս պատերազմեցէք և զօրանոցը մտէք , թէ դուք ձեզ պաշտպանած կ'ըլլաք և թէ թշնամոյն դէմ հանդիսան կը պատերազմիք ըսելով զմեզ քաջակերեցին և անոր վրայ Մէրկէնեան հաճի աղա ու Շամքիշինեան Փամոսը և Մէրկէնեան հաճի Յովհաննէսը իրենց հետ 50 երիտասարդներ զօրանոց մտան :

Իսկ միւս մէկ Հայ խումբը վլոնքի մատ Եէնիփախեանեւ Եղիսաղնուունուն հերտար կը կուռի կատաղի մինչեւ երեկոյ . կանոնական զինուորին հետ : Իսկ միւս Հոյ խումբը Նազարէթ չաւուշի մալարան կը մանան ու զինուորաց հետ կը պատերազմին . այս մեծ խումբին գլուխը անցած էին Մէրկէնեան Պապա աղա Եէնիփախ Աւելիքս , Մէրկէնեան հաճի Յովհաննէս և եղբայրը (որ մեւաւ կուռի ժամանակի) , Մէրկէնեան Նազարէթը , Ենիփախեան Ստելիան աղա Եէնիփախեան Կարապետ աղարինչեան Կարապետ , Միփացէլեան Կարապետ , Բիրինչեան Նազարէթ , մինչեւ երեկոյ , բայց զինուորի գորութիւնը խիստ լինելուն , Հայերը խրեանց տեղը ձգելով վանք իջան , և անոնց տեղը զինուորները գրաւեցին :

Իսկ միւս զինուորական մեծ բանակին հետ կը կուռէին , այս հետեւեալ քաջերը իւր մարդերով Ար . Փրկչի ճամբան վրայ : Հայ խումբին կը կառավարէին Պալճեան Սարգիս աղա , Տէրձեան Խաչէր , Քրիլը օղլու Սբրահմէ , Մախատմէր Գէորգ , Տ . Ղազարեան Աւելիք , Զարքեան Փանոս , Էօքսիւեան Հաճի , Տէրէնթ օղլու Մանուկ , Մէրկէնեան Խաչէր , Գիւրէնի օղլու Սիւրէնեան Խաչէր , Երկանեան Հաճի , Գիւրէնեան Պապար , Սիւրէնեան Խաչէր աղա , Պօյիւմեան Յակուր , Միւրէնի Մարտիրոսեան Փանոս , Պօյածեան Խաչէր , այս պատերազմը անեւց մինչեւ երեկոյ և յազմանակը Հայոց Կողմը եղաւ , զինուորները այլևայլ անկեր փախան երր զինուորաց փախանարք կը անենէ Մուսթաֆա Բէմզի փաշան , անմիջապէս հրաման կ'ընէ մեծ բանակին որ Հայ պատերազմիներուն դէմ կիսամետ այս հրամանին համամատ կանոնական զինուորը կը քաջակերուի ու կասազարար կը կուռի , այս կը ուղին Հայերը կը անենէն որ պիտի յազմուին կը ձգին անելերնին կը փափչին . արդէն ժամանակը երեկոյ եղած էր կուռը կը դադրի , մազմէ նոհանակուեցան 2 քաջ Հայեր :

ՖՈՆՈՒՁԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

